

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈՐԻ ՍԱՀԱԿՅԱՆ

**ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԻ
<<ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ>> ԵՐԿԻ ԵՎ
ՆԱՄԱԿՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ**

Ժ.02.01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Էդ. Ս. Մկրտչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս. Ա. Հայրապետյան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գ.Մ. Մխիթարյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի հունիսի 13-ին, ժամը՝ 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 13-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների

թեկնածու, դոցենտ

Ն.Մ.Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աղվանից կաթողիկոս Տ. Եսայի Հասան-Ջալալյանցը 18-րդ դարի առաջին կեսի հայ ազատագրական շարժման առաջնորդն է, նշանավոր հոգևոր ու քաղաքական գործիչ: Նա եղել է ոչ միայն հայ ազատագրական շարժման գաղափարախոսն ու առաջնորդը, այլև ժամանակի իրադարձությունների պատմագիրը:

Հասան-Ջալալյանցի գրավոր ժառանգությունն է «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի»¹ պատմական երկը:

Այն արժեքավոր վավերագիր լինելուց զատ՝ հետաքրքրական է իր կուռ հյուսվածքով, լեզվաոճական առանձնահատկություններով: Առայսօր պատմական այս երկը համակողմանի և ամբողջական լեզվական քննության չի ենթարկվել, ուսումնասիրողներն անդրադարձել են միայն առանձին հարցերի:

18-րդ դարի լեզվական նկարագիրն ամբողջացնելու առումով յուրահատուկ նշանակություն ունեն կաթողիկոսի երկու տասնյակ նամակները, որոնց բնագրերը պահվում են Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի կենտրոնական արխիվներում: Նամակների մեծ մասը տպագրված է Կ. Եգյանի, մի քանիսը՝ պատմաբան Ա. Գ. Աբրահամյանի, մի մասն էլ՝ Ա. Հովհաննիսյանի խմբագրությամբ ռուսերենով հրատարկված «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. I քառորդում» փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներում²: Կաթողիկոսի ավելի քան քսան նամակ «Պատմութիւն...» երկի հետ միասին տպագրվել են 2007 թ.³, որը դարձրել ենք ուսումնասիրության նյութ՝ նկատի ունենալով, որ այդ հրատարակությունն առավել համահավաք ու լիարժեք է:

¹ Եսայի Հասան-Ջալալյանց, Պատմութիւն կամ Յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից ի թուականին Հայոց 1160, իսկ ի թուականին տեառն մերոյ փրկչին Յիսուսի 1711, Շուշի, 1839 (բնագիր): Տ. Եսայի Հասան-Ջալալյանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, յերուսաղէմ, 1868 (բնագիր): Մենք օգտվել ենք այս՝ վերջին հրատարակությունից (փակագծերում նշում ենք սույնի էջերը):

² Г.А. Эзов., Сношения Петра Великого с армянским народом. Документы, Санкт.-Петербург:Имп.Акад. наук, 1898. Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, ԳԱ հրատ., Եր., 1953: Армяно-русские отношения в первой трети 18-го века, Сборник документов, т.2,ч.1, Е.,1964, т.2, ч 2, Е., 1967.

³ Տ.Եսայի Հասան-Ջալալյանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի (կազմեց Արսո Մարտիրոսյանը), Ստեփանակերտ, 2007, նամակները՝ էջ 144-197:

Այդ նամակներում արտացոլված են պատմական կարևոր տեղեկություններ 1702-1726թթ. Գանձասարում և նրան հարակից տարածքներում տեղի ունեցած իրադարձությունների, կաթողիկոսի ու Ղարաբաղի մելիքների գործունեության մասին: Լինելով պաշտոնական գրություններ՝ այնուամենայնիվ դրանց մեծ մասը գրված է ժամանակի խոսակցական լեզվով:

Ուսումնասիրությունը կարևորվում է հայոց լեզվի պատմության դիտանկյունից: Թեման արդիական է, քանի որ հայոց լեզվի պատմության համար կարևոր սկզբնաղբյուր համարվող պատմագրական այդ գործերի քննությունը կարող է ներկայացնել գրաբարի, միջին հայերենի և վաղ աշխարհաբարի փոխհարաբերությունները 18-րդ դարում:

Սույն ատենախոսությամբ փորձ է արվել բացահայտելու «Պատմություն համառոտ Աղուանից երկրի» երկի լեզվական օրինաչափությունները, դասական գրաբարի իրողությունները, կաթողիկոսի նամականիում հանդիպող վաղաշխարհաբարյան տարրերը, ինչպես նաև ժողովրդական խոսքին (միջին հայերեն, բարբառներ և նոր կազմավորվող աշխարհաբար) հարազատ լեզվաքերականական իրողությունները:

Հարցադրումների այս շրջանակը մինչև այժմ լեզվական նպատակային և ամբողջական քննության չի արժանացել: Սրանով է պայմանավորված ատենախոսության թեմայի արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի նպատակը Ե. Հասան-Ջալալյանցի պատմական երկի և նամականու լեզվական քննությունն է, որը կարող է վեր հանել հեղինակի լեզվի բնորոշ յուրահատկությունները և դրանց միջոցով ներկայացնել, թե ինչ հարաբերակցություն ունեին հայերենի հին և նոր լեզվական իրողությունները 18-րդ դարում:

Այդ նպատակի համար առաջ են քաշվել հետևյալ հիմնախնդիրները՝

ա) բացահայտել հնչյունական և բառակազմական տեղաշարժերը՝ ըստ երկի և նամակների,

բ) դիտարկել բառապաշարի շերտերը՝ առանձնացնելով և բնութագրելով փոխառություններն ու բարբառային բառաշերտի բառերը,

գ) ցույց տալ հեղինակային նորակազմությունները,

ե) ներկայացնել հողվման և խոնարհման համակարգերի փոփոխությունները՝ գրաբարի համեմատությամբ,

զ) բացահայտել երկի և նամակների լեզվի շարահյուսական ու ոճական յուրահատկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

«Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» երկը և հեղինակի նամականին առաջին անգամ են գիտական առանձին հետազոտության նյութ դարձել:

Սույն հետազոտությամբ գիտական շրջանառության մեջ են դրվել հնչյունական և բառակազմական տեղաշարժերի որոշակի փաստեր, մեկնաբանվել են փոխառյալ բառերի ծագումնաբանական շերտերը, զատվել են բարբառային բառերը, որոնք հեղինակի լեզվում հաճախադեպ գործածություն ունեն: Մյուս կողմից՝ հայերենի պատմական քերականության համար կարևոր անդրադարձ է 18-րդ դ. լեզվի հղլովման և խոնարհման համակարգերի տարածամանակյա փոփոխությունների նկարագրությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթները կարող են նպաստել 18-րդ դարի հայերենի լեզվավիճակի բնութագրությանը, ինչպես նաև կարող են ամբողջացնել հայերենի պատմության տվյալ ժամանակահատվածի լեզվաքերականական իրողությունների գիտական նկարագրությունը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել հայոց լեզվի պատմության հարցերով զբաղվող մասնագետների համար, ինչպես նաև դրանք կարող են փաստական նյութ դառնալ բուհական համապատասխան դասընթացներին ու ձեռնարկների կազմման աշխատանքներին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ե. Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» աշխատանքի և նամակների լեզվական իրողությունները քննված են համեմատական մեթոդի համաժամանակյա և տարածամանակյա հայեցակարգերով, դիտարկված են հայերենի վաղ աշխարհաբարի ենթաշրջանում նկատվող լեզվաոճական առանձնահատկությունները՝ համեմատելով գրաբարի իրողությունների հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական

համալսարանի ակադ. Ա. Ղարիբջանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

Ատենախոսության մի քանի դրույթներ ներկայացվել են «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովներում:

Ուսումնասիրության հիմնադրույթներն արտացոլված են տպագրված յոթ հոդվածներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից և եզրակացություններից: Ատենախոսության վերջում տրված են համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերը: Աշխատանքը համակարգչային շարվածքի 134 էջ է:

Ներածություն բաժնում ներկայացված են ատենախոսության հիմնական հարցադրումները, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու նշանակությունը, ինչպես նաև քննվող գործերի լեզվի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Տրված են աղվանից կաթողիկոս Տ. Եսայի Հասան-Ջալալյանցի կյանքի ու գործունեության որոշ մանրամասներ, «Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի» երկին վերաբերող պատմագիտության մեջ եղած անդրադարձները և կաթողիկոսի նամականու տպագիր աղբյուրներն ու դրանց լեզվական քննության պատմությունը:

Առաջին գլխում՝ ««Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի» երկի և նամակների լեզվի հնչյունական բնութագիրը», քննության են առնված երկի և նամակների լեզվում առկա հնչյունական իրողությունները: Հնչյունական համակարգի փաստերը ներկայացված են միասին՝ նպատակ ունենալով ցույց տալ քննության ենթակա գործերի լեզվում եղած ընդհանրություններն ու տարբերությունները⁴:

Նամակներում կան հնչյունական, գրչագրական մի շարք տարբերակներ, հաճախ նաև սխալագրություններ: Դրանք, անշուշտ, բարդացնում են քննության ընթացքը՝ առաջացնելով տարընթերցում և տարըմբռնում:

Հնչյունական տարբերակների մի մասն առաջացել է ժամանակի խոսակցական լեզվի ազդեցությամբ, մի մասն էլ որոշ երևույթների տեղայնացմամբ՝ որևէ բարբառի պատկանելու հանգամանքով: Լեզվական մի քանի փաստեր ստուգվել և համեմատվել են Կ. Եզյանի, պատմաբան Ա. Աբրա-

⁴ Աստղանիշ (*) ունեցող օրինակները քաղված են նամակներից, իսկ առանց աստղանիշի՝ Պատմությունից:

համյանի կողմից տպագրված վավերագրերի հետ⁵: Դիտարկվել են որոշ հնչյունական տարբերակներ, որոնց ակունքը, բացառված չէ, կարող են տարբեր ձեռագրերը լինել: Այսպես՝

ուսմանլու (ԱԱ, N22, 169) - օսմանլու (Ն, 190)

դժուար (ԿԵ, N276,422) - տժվար (Պ,185)

ազդեալ (ԿԵ,N274,419) - ազտեալ (Պ, 180,184)

էսիր (ԿԵ,N274,419)- եսիր (Պ, 181):

Որոշ դեպքերում հնչյունական տարբերակները հանգեցնում են իմաստային շփոթի՝ զատէն (ԿԵ, N 274, 419) - շատ են (Պ, 181), ողջ լեր (ԱԱ, N28,179) - ողջ չէր (Պ,171), խարճխօրակն (ԿԵ, N274, 419) - խարջ խօրակն (Պ,181):

Նամակների հնչյունական համակարգի վերաբերյալ դիտարկումները ներկայացնելիս հենվել ենք 2007 թ. հրատարակության տվյալների վրա: Վկայված են հնչյունական այն հիմնական փոփոխությունները, որոնք մեծ մասամբ վերաբերում են նամակներին («Պատմություն...» երկում գրաբարի կանոնավոր ձևերից շեղումները խիստ սակավ են, հիմնականում վերաբերում են բաղաձայնական համակարգին):

1.Ձայնավորների հնչյունափոխությունը:

Ե ձայնավոր: Բարբառային ընդգծված երանգավորում ունեն *զանջցի* (<զանջեցի), *զանջցոց* (<զանջեցի+ոց) բառաձևերը: Օրինակ՝ «Ես *զանջցի* Աւետիքի որդի Ատիպէկս յոժար եմ այսմ խորհրդիս, աստուծով» (161*): «Դարձեալ Փիլիպն *զանջցոց* և մեր թղթովն գնաց շահին մօտն» (183*):

Է ձայնավոր: Է>ի: Օրինակ՝ «Եվ միահաղոյն խառնեալ վարեցին գառ ի վայր ընդ գետն *Խաչինոս*» (38,37): «Թագաւորի *աստրածասիրի* և բարեպաշտի» (56*,159*):

Նկատելի են փոփոխություններ, որոնք խոսակցական լեզվի և բարբառի ազդեցության հետևանք են:

Ի ձայնավոր: Ի>ը հնչյունափոխություն է տեղի ունեցել՝ պարիշել > *պարշել* և էջմիածին>*էջմիածնցի* բառերում՝ «Յառաջ էլ եկել ին *պարշել*, հիմա էլ այդպէս են արել. ես ինչ անեմ» (171*): «Մանաւանդ մեր թշնամիք և հակառակք անչափք կան և որպէս դու իսկ գրեալ ես, թէ ջուղեցիք, թէ *էջմիածնցիք* և թէ շամախեցիք» (163*):

Ու ձայնավոր: Ու-ն, շեշտակորույս լինելով, գաղտնավանկի ը-ի է վերածվում՝ *Մուղան>Մ(ը)ղանու* բառում, որտեղ նկատելի է բանավոր-խոսակցական լեզվի ազդեցություն: Օրինակ՝ «Այլ և զօրք ես հասին աստի և անտի, (այսինքն Գանջայու և Ղարաբաղու և *Մղանու*)» (31): Հանդիպում է

⁵ Փակագծերում կնշենք վկայված փաստաթղթի աղբյուրը, համարը և էջը՝ Կ. Եզյան (ԿԵ), Ա. Աբրահամյան (ԱԱ), «Պատմություն...» (Պ):

նաև անհնչյունափոխ ձևով. «Խառնին ընդ միմեանս հանդէպ բերրի դաշտին Մուղանո» (36):

Խոսակցական լեզվի ազդեցություն կարելի է համարել նամակներում հանդիպող *ու/ն/ա* տարբերակների առկայությունը՝ *ուղարկել/ ողարկել /աղարկել*, որը հանդիպում էր նաև միջին հայերենում⁶:

Այսպես՝ «Չգիտեմք. դուք չէք *ողարկում*, թէ էստեղաց չէ գալիս, ձեզանէ կոփանդեմք, այս թուղթս տեղ հասուցանէք շուտով, և մեզ մէկ սարեհ ջուղապ փութով *ողարկէք*» (180*): «...Էսչանք մարթ *աղարկեցի*» (192*):

Ու>վ՝ եզակի օրինակ է հանդիպում նամակներում՝ *ու-ի* փոխարեն *վ* գրությամբ. «Դարձեալ մեր այն Քևխայ Չալապին մին փոքր իքմին *տվի* և յղեցի առ քեզ» (195*):

Երկու անգամ վկայված է *ու//ո* տարբերակով *ուրիշ > որիշ* ձևը (հմմտ.ղրբ. *ուրիշ>օրիշ*), որը հավանական է *որոշ* բառի գրչագրական տարբերակն է: Օրինակ՝ «Վրացտան միայն քաղաքումն կա դօշուն, այլ *որիշ* տեղ չկա» (164*,183*):

Օրինաչափ չէ *<ոռոմք><ոռոմց*⁷ բառում կատարված *ո* ձայնավորի սղումը՝ «Այնքան մնացիր որ *<ոռոմց* երկրէն այնչափ խօճէք եկին» (194*):

Հանդիպում է նաև *ո>ու* «ձայնաշրջության»⁸ մեկ վկայություն՝ «Յի քամինա *փութք* ծառայ Յիւան Կարապետէս թասլիմն և բաղայտի լինի սա-հապին» (192*):

2. Երկբարբառների ու եռաբարբառների պատմական և շեշտափոխական հնչյունափոխությունը: Այ: ա) Այ>ա՝ մայր>մարք, մարց, որը գրաբարին բնորոշ հնչյունափոխություն է: Օրինակ՝ «Աստանօր տեսանելի է գաղետ յետամնացելոց, գուօզ կոտորելոցն, և գաշխարս գերելոցն, գկսկիծ մարցն...» (38): բ) Այ>է⁹ - բառասկզբում՝ այն>էն, այնտեղ>էնտեղ, այստեղ>էստեղ, այսչափ> էսչափ և այլն: Օրինակ՝ «Ես էն տեղէն դուրս եկի գնացի ներքի գեղրանքն» (171*): «Այս մէկ տարի կէս է Իւան Կարապետն էստեղ մեր մէջս թագաւորի հրամանաւ, էսչափ թուղթ գրեցինք» (180*):

Իւ: ա) *Իւ>ի* փոփոխություն՝ «...*իր* թղթերն գրեալ ողարկեցի առ քեզ» (190*): բ) *Իւ/եւ>ե*՝ «...Սոքա ես ազգաւ գնացեալ էին՝ և զՍօկութլու գեղն նորոգ շինեալ և բնակեալ որ և քան զայն՝ այլ առաւել ոչ գոյր ի մէջ գիւղօրէիցն» (27): «Ապա այս տղայոց գեղի վերայ կոին ինձ վերայ թօհմաթ էք գրել» (171*):

⁶ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ.Ա, Երևան,1972, էջ 84-85:

⁷ Եզակի օրինակ է, հավանաբար վրիպակ է:

⁸ Հր. Աճառեան, Ուսումնասիրութիւններ հայկական բարբառախօսութեան, մաս III, Ղարաբաղի բարբառի քննութիւն, Վաղարշապատ, 1899, էջ 79:

⁹ Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ.1,Եր.,1982, էջ 91:

Եա: ա) Եա>ե՝ «...Տարեալ զքսան և հինգ տունն *բնակեցոյց* երկրին յայնմիկ» (20): «Վրաց տուն առա, և եկն մինչև ի Գանջայ, Ի (20) օր *ծծեց* զքաղաքն և դարձաւ» (165*): բ) Եա>ա¹⁰՝ «Որովհետև մեզ էլ մեկ *տեղաց* իմտատ չլինում» (192*):

Եռաբարբառների փոփոխությունը գրաբարյան է՝ ա) Եայ>է՝ պաշ–տօնեայք >պաշտօնէից (14), գիւղօրեայք> գիւղօրէից (14), քրիստոնեայ >քրիստոնէի (156*,157*): բ) Եաւ>եօ պատմական փոփոխության մեկ դեպք է հանդիպում՝ *չարեօք* (ԺԱ):

Երկում և նամակներում ձայնավորների, երկբարբառների ու եռաբարբառների հնչյունափոխությունները հանդիպում են որոշ շեղումներով: Երբեմն այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ոչ միայն խոսակցական ոճի կամ բարբառների ազդեցություններով, հնարավոր են նաև սխալագրություններ և գրչագրական սպորտներ: Այս երևույթը տարածվում է հատկապես բաղաձայնների վրա:

3. Փոփոխություններ բաղաձայնական համակարգում:

Բաղաձայնական համակարգի փոփոխությունները ներկայացված են հետևյալ դասակարգմամբ:

ա) Ձայնեղների խլացում բ>պ՝ բողոքեալ>պողոքեալ (165*), Ղարաբաղ>Ղարապաղ (27), խաբար>խապար (164*), ղզլբաշ> ղզլպաշ (164*), *ղ>պ՝* գինդ > գինտ (147*), ազդեալ > ազտեալ (165*), յուսադրական > յուսադրական (165*), *գ>կ՝* գանգատ>կանգատ (164*), բարձրագահ> բարձրակահ (160*), փափագել>փափակել (161*), *ղ>խ՝* Աղստև>Ախստև (23), *ծ>ժ՝* ծորակ > ծորակ (42), ծանձրութին > ծանձրութին (164*), *ջ>ճ՝* ջահ > ճահ (160*):

բ) Ձայնեղների շնչեղ խլացում ձ>ց՝ բարձ>բարց (148*), *գ>ք՝* հագնել> հաքնել (148*), *վ>ի՝* Մոսկով>Մոսկօի (144*):

գ) Խուլերի ձայնեղացում կ>զ՝ շրջակա>շրջագայ (10), *տ>դ՝* ճշտի>ճշդի (15), *պ>ք՝* պրծնել>քրծնել (181*), *ապստամբիլ>աքստամբիլ* (164*), *ճ>ջ՝* աճապարել>աջապարել (151*), խեղճ > խեղջ (195*):

դ) Ծնչեղ խուլերի ձայնեղացում չ>ջ՝ անտերուն>անտերունջ (44), խանչալ>խանջալ (147*), *թ>ղ՝* սուլթան>սուլղան (4):

ե) Ծնչեղ խուլերի վերածում պարզ խուլերի՝ *թ>տ՝* սուլթան > սուլտան (39,52), Վախթանգ>Վախտանկ (53,40):

զ) Պարզ խուլերի շնչեղացում պ>փ՝ կապիտան>կափիտան (146*), *կ>ք՝* Կուր>Քուռ (23):

Հնչյունափոխական վերոնշյալ երևույթներից բացի՝ արձանագրել ենք նաև բաղաձայնների ոչ համակարգային փոփոխություններ, ինչպես նաև

¹⁰ Նույն տեղում, էջ 168-170:

փոխազդեցական հնչյունափոխության որոշ փաստեր: Օրինակ՝ 1. *յ>հ* գերակայ >գերակահ (150*), 2. միաթրթիռ *ր-ն* վերածվում է երկթրթիռ *ռ-ի* և հակառակը՝ (*ր>ռ, ռ>ր*) Շամբոր >Շամբոռ (25,40), Իսրայել Օրի> Իսրայել Օռի (163*), գերահռչակ >գերահրչակ (156*), 3. *հնչյունի կորուստ*՝ *Յովհաննէս* հատուկ անվան գործածության մեջ բառասկզբի *յ-ն* ընկել է, և բառն ամբողջովին այլ պատկեր է ստացել՝ *Ովանէս* (171*): Յ հնչյունի անկում է նկատվում նաև բառավերջում՝ *Ամարասա* (162*), *Էջմիածնա* (163*): 4. Սրան հակառակ՝ հաճախ են *յ-ի* հավելագրության, անհարկի գործածության դեպքերը՝ *բազմայպպոհիկ* (144*), *քրիստոսայինամ* (144*), *պարզևայտուէ* (144*), *թղթայբերն* (145*), *խնամայտար* (145*), որոնք Գ. Ջահուկյանը համարում է բարբառային ազդեցության հետևանք¹¹: 5. Դրափոխություն՝ *ապիրշում* (28. փխ.՝ ապիրիշում) բարբառային բառում: 6. Առնմանում՝ *զանկակ* (164*) բառում, որտեղ բառավերջի խուլ պայթական *կ-ի* ազդեցությամբ *գ-ն* վերածվել է *կ-ի*:

Երկրորդ գլուխ. «Բառապաշար»: Ե.Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն...» երկն ու նամականին ունեն ինքնատիպ բառապաշար: Դրանք, թեև նույն ժամանակաշրջանում են գրվել, սակայն բառապաշարային առումով զգալիորեն տարբերվում են միմյանցից: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ երկրորդ գլուխը բաժանված է ենթաբաժինների:

Առաջին ենթագլխում՝ «Պատմութիւն...» երկի բառապաշարային առանձնահատկությունները, քննության են առնված բառերի իմաստային նոր կիրառությունները, բանավոր-խոսակցական լեզվում և բարբառներում հաճախ գործածվող փոխառյալ բառերը, բացահայտվել են նորակազմությունների բառակազմական միջոցներն ու եղանակները:

ա) Նոր իմաստային կիրառություններ: Հրացան (նախնական «հուր՝ կրակ ցանող, շանթառաք, կայծակ» նշանակություններից անցել է նոր իմաստի՝ «զենքի մի տեսակ՝ ձեռքի հրազեն՝ երկար մետաղյա փողով ու փայտե կոթով».)⁴⁹, *գծագրեմ* («ծրագրել, ստուերագրել, դրոշմել, ձևացնել»), նոր իմաստ՝ «նկարագրել, շարադրել» (12,19), *առնեմ* («գործել, անել, կատարել, ստեղծել, կերտել»), նոր իմաստ՝ «հանձնել, բռնագրավել» (29) և այլն:

բ) Փոխառյալ բառեր: Երկի բառային կազմում որոշակի տոկոս են կազմում *փոխառությունները*: Առանձնացվել են հատկապես այն փոխառյալ բառերը, որոնք հայերենին են անցել ուշ միջնադարում և լայնորեն գործածվել են բարբառներում: Այդ բառերի մի զգալի մասը վկայված չէ հայերենի բարբառային բառարաններում: Դրանք են՝ *ապիփուրան* («ոռոգման ջրի համար վճարվող հարկ».) 15), *շահզպի ախրաջաթ* («բարձրապաշտոն հյուրերի

¹¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Բարբառային երևույթները հայկական հիշատակարաններում, Եր., 1997, էջ 28,37:

համար վճարվող հարկ».¹⁶), շէշփինար («վեց փասը (60)».¹⁶), քում («մեփաքս գործելու դազգահ».²⁸), մաջինակ («դազգահ».²⁸), շխալլամբ («մուսուլմանների հոգևոր բարձրագույն պաշտոնյա».¹⁷), թարաքամայ («քոչվոր ցեղեր».⁴¹), ջապախան («զինանոց».⁵⁰), դարուդայ («ոսփրիկանապետ».¹⁶⁻¹⁷), թուիլփար («գանձապետ».¹⁷) և այլն:

գ) Հեղինակային նորակազմություններ: Քննության բնագրերում հանդիպում են ավելի քան մեկ տասնյակ նորակազմություններ (դրանցից երեքը նամակներից են), որոնք վկայված չեն գրաբարի կամ միջին հայերենի բառարաններում, իսկ եթե առկա են, ապա ոչ այդ ձևով: Այդ բառերն են՝ ծինաքնակ (21), լեռնաքնակիչ (54), զինակազմ (48-49), իշաքարոյ (33), համարաթիւ (14), ահարկադէմք (35), ազգաշարութիւն (7), կրկնաշարագոյն (6), քաղցրահոտ (36), սփորանկանիլ (14), նորաբուսիկ (52), քրօփէաճէմ («հրեշտակի պես քայլող».^{144*}), աջբազուկ («օգնական, աջակից».^{162*}), մուշկափաթան («բարակ կաշվով փաթաթած».^{147*}):

Տրվել են հեղինակային նորակազմությունների կաղապարները: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ հաճախադեպ կիրառություն ունեն SjS հիմնակաղապարն ու նրա ենթատեսակները (արմատ + հոդակապ+արմատ):

Երկրորդ ենթագլխում՝ «Նամակների բառապաշարային առանձնահատկությունները», ուսումնասիրված են առավել լայն գործածություն ունեցող և տվյալ ժամանակաշրջանին բնութագրական բառապաշարային իրողությունները: Նամակների լեզուն բնորոշվում է ոչ միայն գրական, այլև հասարակական-քաղաքական կյանքն արտացոլող բարբառային ու փոխառյալ բառերով:

Հաճախ բառերի ընտրությունը պայմանավորված է թեմայով և հեղինակի նպատակադրմամբ: Այսպես՝ Պետրոս Առաջինին ուղղված նամակներում նույն նախադասության մեջ հեղինակը մի դեպքում գրում է հայատառ ուսերենով՝ վէլիք իփրափոր (իհարկե՛ որոշ տառադարձությամբ և բարբառային հնչմամբ՝ վէլիք իփրափոր /իմփրափոր/ իմբրափոռ - велухаи амне-растор), մյուս դեպքում՝ հայերեն համարժեքով՝ «մեծի ինքնակալ կայսեր» (կայսր): Օրինակ՝ «Աստուածագոր մեծի ինքնակալ կայսեր Պէտր վէլիք իփրափոր, ծովու և ցամաքի աստուածապար իշխեցօղի» (180):

Նամակների բառային կազմում զգալի թիվ են կազմում **փոխառությունները**, որոնց աղբյուրները թուրքական, պարսկական և արաբական լեզուներն են: Այդ բառերը վերաբերում են տարբեր բնագավառների և պատկանում են իմաստային-թեմատիկ տարբեր խմբերի:

Պարսկերենից՝ խրիփ (xeriden «շահավետ գործ՝ առևտուր».^{170*}), դափիմ (qadim «հին, նախկին».^{186*}), դուլուղ (kul*ek «զինվորների

պահականոց».^{196*}), *թուրքական լեզուներից*¹²¹ *անջախ* (ancak «հազիվ, դժվարությամբ, հազիվիհազ».^{171*}), *էլչի* (elci «դեսպան, հարկահավաք, պատգամավոր».^{160*-161*}), *ճոթ* (jot «գործվածք, կտոր».^{147*}), *արաբերենից*¹³¹ *մաթահ* (արբ. meta. «ապրանք», թրք. matah «գնահատելի, արժեքավոր, գովելի».^{194*}), *մաճար* (majar «հունգարացի».^{148*}), *ջումիայթ* (արբ. jamaat, պրսկ. jamaat, թրք. cemaat «հասարակություն, հանրություն, ժողովուրդ».^{147*}), *քուլ* (koll «բոլոր, ամբողջ».^{192*}), *եվրոպական լեզուներից և ռուսերենից` սիճօր* (հուն.^{197*}), կափիտան (գերմ.^{146*}), իմփրատօր//իփրադօր//իմբրատո (լատ.^{165*,180*}), ճզվիթ (ֆրանս.^{148*}), ուքազ (ռուս.^{162*}), տվորնի (ռուս.^{147*}), պայար (ռուս.^{181*}) և այլն:

Նամակներում հաճախ են գործածված խոսակցական լեզվին բնորոշ **բայական հարադրություններ**, որոնց անվանական բաղադրիչը փոխառյալ բառ է: Օրինակ՝ *աշքար(ա) անել (146*)* -«հայտնի դարձնել», *աջիզ ինել (171*)* -«աչքով տալ, չար աչքի գալ», *երիշ անել (193*)* - «մենամարտել, գրոհել, հարձակվել», *սղնաղ սղնաղ անել (185*)* - «բաժան-բաժան լինել, մեկուսանալ» և այլն:

Նամակների բառապաշարը հարուստ է **բարբառային լեզվաչեռփին** պատկանող բառերով և բառածներով: Օրինակ՝ *գեղուգեղ (183*)*, *էսանք (192*)*, *իքմին (146*)*, *խաթթ համար (165*)*, *վախուն (146*)*, *վախտուն (146*)*, *տվի (195*)*, *տրի (146*)*:

Հաճախ հանդիպում են նաև ժողովրդական կենդանի խոսքից վերցված **դարձվածային միավորներ**, որոնցով խոսքն առավել կենդանի և անմիջական է դառնում: Օրինակ՝ *աչաց լոյս* («շատ սիրելի, պաշտելի, թանկագին անձ».^{190*}), *աչքն ճանապարհին* («անհամբեր սպասել».^{183*}), *միտքներն ծուռ* («հետին միտք ունեցող, նենգավոր, խարդախ».^{183*}) և այլն:

Երրորդ զլուխը՝ «Քերականական առանձնահատկություններ», ևս բաժանված է երկու ենթազվիխ:

Առաջին ենթազվիխում՝ «Ձևաբանական դրսևորումներ», ուսումնասիրված են վաղաշխարհաբարյան լեզվավիճակին բնութագրական իրողությունները:

Պատմության հեղինակն առավելապես հավատարիմ է մնացել դասական գրաբարի հոլովման համակարգի օրինաչափություններին: Հոլովման համակարգում գերակշռում են զուտ գրաբարյան թեք հոլո-

¹² Այս անվան տակ նկատի ունենք թուրք-թաթարական բոլոր փոխառությունները՝ հիմք ընդունելով Աճառյանի հիմնավորումը. տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, , մաս II , Եր., 1951, էջ 258:

¹³ Վերապահությամբ ենք արաբական համարում, քանի որ այս բառերի մեծ մասը գործածական է նաև պարսկերենում և թուրքերենում, հետևաբար դժվար է որոշել փոխառության աղբյուրը:

վածները՝ *ալտենի* (14), *առաւօտրու* (25), *պապերազմաց* (10), *ուսպեր* (17), *դսպեր* (17) և այլն:

Նամակների լեզուն ներկայանում է որպես ժամանակի լեզվական տարբերակվածության, գրաբարախառն և խոսակցական-բարբառային կառույցների համադրություն: Նամակների բառային կազմի *հոլովման համակարգն* առանձնանում է բազմաձև դրսևորումներով, հատկապես կարևորվում են գրաբարյան կանոնավոր ձևերից շեղվող և լեզվի զարգացման վաղաշխարհաբարյան ենթաշրջանին բնորոշ իրողությունները:

Հոլովածների կազմության հարցում նկատելի են ձևային ընդհանրացումներ, դեռևս գործուն են հայցականի *զ*, բացառականի *ի* նախդիրները, հանդիպում են նաև աննախդիր գործածություններ:

Գործիական հոլովի թեքություններից (*-աւ, -իւ, -ամբ* և այլն) տարբեր հոլովումների պատկանող բառերի համար, իբրև գործիականի հոլովական վերջավորություն, ամրակայվել է աշխարհաբարյան *-ով* վերջավորությունը: Օրինակ՝ *լթթուլ* (185*), *երկրով* (161*), *մէլիքով* (161*):

Ներգոյականի իմաստը գրաբարյան ձևերին զուգահեռ արտահայտվում է նաև աշխարհաբարին բնորոշ *-ում* վերջավորությամբ, հաճախ դրան հաջորդում է բարբառային *ն* որոշիչ հոդը: Օրինակ՝ *օրում* (183*), *ամսում* (173*), *խոպումն* (148*), *քաղաքումն* (183*), *երկրումն* (185*):

Գրաբարյան անկանոն հոլովումը պարզեցման միտում է ցուցաբերում, որ բնորոշ է ժամանակի խոսակցական լեզվին: Օրինակ *գիւղ* գոյականը հանդիպում է տարբեր ձևերով՝ *գեղ* (185*), *գեղի* (171*), *գեղրանք* (171*), *գեղարանց* (181*, 197*):

գ) **Դերանունների** գրաբարյան հոլովածներին զուգահեռ վկայված են վաղաշխարհաբարյան ձևեր: Ուշագրավ է անձնական դերանունների բացառական հոլովի կազմությունը: Խոսակցական լեզվի ազդեցությամբ հանդիպում են *մեզան//մեզանէ և ձեզանէ* ձևերը (փխ.՝ ի մէնջ, ի ձէնջ): *Մեզան* ձևում նկատելի է նմանություն Ղարաբաղի բարբառում գործածական *մեզանա* դերանվան հետ (*ա* հնչյունի անկումով)¹⁴: Օրինակ՝ «*Մեզան* գիր ուզեց...» (174*): «*Ձեզանէ* կուփսնդրեմք...» (180*):

դ) «Պատմություն...» երկի և նամակների լեզվում յուրահատուկ դրսևորումներ ունի **գոյականի թվի կարգը**: Երկի լեզվում գոյականների թվի կարգն արտահայտվում է տարաբնույթ մասնիկների գործածությամբ. կիրառության հաճախականությամբ գերակշռում են գրաբարյան *-ք* ձևույթը կամ նրանով բաղադրված հոգնակերտները՝ *բանք* (է), *օսմանցիք* (10), *շէխք* (17), *վարձաւորք* (18), *խանք* (25), *լեռնականք* (30), *գազանք* (34), *վանորայք* (11), *լեռնորայք* (35) և այլն:

¹⁴ Հր. Աճառեան, Ուսումնասիրություններ հայկական բարբառախօսութեան, մաս III, Ղարաբաղի բարբառի քննութիւն, Վաղարշապատ, 1899, էջ 145:

Նամակների լեզվում գործառական հաճախականությամբ գրաբար-
յան *-ք* մասնիկին հաջորդում են *-եր/-ներ* և բարբառային *-(ի)ք, -էք* ձևույթ-
ները (խօճէք (194*), ջուղեցիք (163*)): Հստակեցվում են *-եր* և *-ներ* հոգնակի
վերջավորությունները. *-եր*-ը մեծ մասամբ գործածվում է միավանակ բառերի
դեպքում՝ *թուրքեր (146*)*, *հակեր (148*)*, *աչքեր (164*)*, *բաներս (183*)*, *թղթեր
(190*)*, իսկ *-ներ*-ը՝ բազմավանակ՝ *երկրներ (182*,185*,186*,193*)*, *քաղաքներ
(193*)*, *մէլիքներ (183*)*:

ե) Ի տարբերություն «Պատմութիւն...» երկի (որտեղ իշխում են
գերազանցապես գրաբարյան իրողություններ)՝ նամակների բառային կազմի
բայական համակարգում նկատվում են լեզվական անմիօրինակություններ:

Գրաբարի դերբայներից բացի՝ գործածվում են նաև միջին հայերե-
նում ձևավորված *վաղակատար, հարակատար, ապառնի և անկատար* դեր-
բայները: Քերականական ձևերում որոշակիորեն գծագրվում են աշխար-
հաբարի խոնարհման համակարգին բնորոշ օրինաչափություններ:

Նամակների լեզվում բայի սահմանական եղանակը արդի հայերե-
նին բնորոշ դրսևորումներ ունի (*յուսահատում է (192*)*, *գնում է (192*)*,
նուազում է (192)*, *ասել ին (146*)*, *գրել ես (171*)*, *մատնեց (146*)*, *ծեծեց (165*)*,
հաճախադեպ են նաև միջինհայերենյան **կու** մասնիկով կազմությունները՝
կուհասանի (197)*, *կու յաղթէ (185*)*, *կուծանուցանէ (161*)* և այլն:

Գրաբարյան ստորադասական եղանակի ձևերին զուգահեռ գործած-
ված են *ըղծական, պայմանական, հարկադրական* եղանակների բայածներ՝
պիտի հաստատեն (197)*, *պիտի գրես (171*)*, *շնորհի (160)*, *պահես (174)*,
բռնէք (192,193*)* և այլն:

Ժխտական խոնարհման դեպքում նկատելի են գրաբարախառն,
բարբառային և զուտ աշխարհաբարյան կազմություններ (ժխտական մաս-
նիկի նախադաս գործածությամբ): Ինչպես՝ *չեմք կարօղ (163*)*, *չէք տեսնում
(171*)*, *չեն կարացել (182*)*, *չեն տեսնում (193*)*, *չէք ողարկիլ (185*)*, *կարիլ
չեմք (182*)*, *տեսած չեմ (195*)*, *չի կաս (170*)*, *չի ողարկես (170*)*, *կարօղ չի
(163*)* և այլն:

Բ. *Երկրորդ ենթազգլխում*՝ «Շարահյուսական համակարգի իրողու-
թյուններ», դիտարկվել են «Պատմութիւն...» երկի և նամակների շարահյուսա-
կան միավորների դրսևորման առանձնահատկությունները:

Ուսումնասիրվող շրջանի շարահյուսական կառուցվածքի յուրահատու-
կություններից է որոշչի նախադաս կիրառությունը:

Երկի որոշ հատվածներում և նամակներում կատարված վիճա-
կագրությունից պարզվում է, որ մոտ 70 որոշչից 60-ը նախադաս է, 10-ը՝
հետադաս: Օրինակ՝ «Սոյնպէս առնէին և օրինապառք դպիրք նոցա» (17):
«Արդ՝ իշխանութիւն թագաւորութեան վասն երկուց պատճառաց շնորհի ձեզ»
(160*):

Խնդրո առարկա գործերում որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններն արդեն ունեն նոր ժամանակներին բնորոշ շարահյուսական կիրառություններ: Եվ այդ կապակցություններում անհամաձայնության դեպքերի զգալի մասը բանավոր խոսքի ազդեցության հետևանք է:

Նամակների լեզվի *շարահյուսական* առանձնահատկություններից է *ուղղականով ենթակա դիմավոր բայով ստորոգյալ* կառուցի լայն գործածությունը: Փոփոխություն է կրել կապի և կապվող բառի շարադասությունը:

Երկում նախադրությունները գրաբարյան կիրառություններ ունեն, հազվադեպ դրսևորում են մասնակի շեղումներ, մինչդեռ նամակների լեզվում նկատելի են նախադրության ու նրա խնդրի շարադասության խախտման, նախադրության հետադաս կիրառության, նախադրության հոլովառության խախտման դեպքեր: Օրինակ՝ «*Վասն այն* կամ էր զայս զօրս՝ մանաւանդ ազգս Հայոց իւրն սեփհականեցուցանել որպէս Տիփսիսեցիք» (49. փխն.՝ վասն այնորիկ):

Զկնի նախադրությունը հանդիպում է հետադաս դիրքում՝ որպես հետադրություն: Օրինակ՝ «*Եւ այսու զկնի* զմիմեամբք ելեալ յառաջացան ի գահ իշխանութեան» (7. պետք է լիներ *զկնի այսու*՝ սրանից հետո):

Շարադասական շեղումներ է դրսևորում *ի վերայ* նախադրությունը, որը գրաբարում միայն նախադաս էր դրվում: Երկում և նամակներում այն հանդիպում է հետադաս, երբեմն նաև՝ առանց *ի* բաղադրիչի: Օրինակ՝ «Թագաւորեցուցանեն *ի* ինքեանց *վերայ* ասելով, թէ սա է ժառանգ երկուց կողմանցն» (8): «Եթէ դու մէկ մէկ *նորա վերայ* գիր գրես լաւ կուլինի» (164*): «Ապա այս տղայոց *գեղի վերայ* կոհին ինձ վերայ թօմաթ էք գրել» (171*):

Ի մէջ նախադրության փոխարեն գործածվում է *մէջ/մեջ* հետադրությունը՝ որպես կապ: Օրինակ՝ «Որպէս վերևն գրեցաք *սոցա մէջն* մարդ կարող չէ խորհուրդ յայտնել» (163*): «Ես ինչ բան ունիմ *դոցա մէջն*» (171*):

Սօսր նախադրությունը վերածվում է հետադրության՝ կապի և պահանջում է տրական հոլովով խնդիր: Օրինակ՝ «*Մեզ մօսր* ևս յառաջ էլչի եկաւ» (183*):

Քննվող գործերում հանդիպում են նախադասության կառուցվածքային բոլոր տեսակները՝ դիմավոր, անվանական, դերբայական, որոնք պահպանել են գրաբարյան օրինաչափությունները:

Նախադասության շարահյուսական կառուցվածքի հետ են առնչվում նաև ընդմիջարկությունները, որոնք գրաբարում տարածված կիրառություններ են և բնորոշ են հատկապես «Պատմութիւն...» երկի լեզվին:

Գլուխ IV. Ոճական առանձնահատկություններ: Սույն գլխում անդրադարձ է արվում Ե. Հասան-Ջալալյանցի երկի և նամակների լեզվաոճական առանձնահատկություններին:

Ուսումնասիրվող գործերն աչքի են ընկում ոճական կառույցների ու հնարքների, հումանիշ ու հակահիշ բառերի նպատակային կիրառություններով, մակդիրների, փոխաբերությունների և համեմատությունների հմուտ գործածությամբ, որոնք շեշտում են հեղինակի լեզվի ու ոճի անհատականությունը: Օրինակ՝ «Իսկ նոքա ըստ բիրտ և սուպր բարուցն Վրաց՝ ոչ անսային, և ոչ լսէին հրամանի գլխատրին իրեանց» (45): «Պարտիմք մեք ողբալ և հառաչել և աաղել զողորմելի կեանս մեր» (Ժ): «Եղաք իբրև նաաբեկ ոք որ ի մէջ կոհակացեալ ալեաց ծովուն փարաբերի ուրիւք և ձեռօք, և ոչ ոսպեքէ լինի փրկութիւն» (ԺԲ):

Երկի և նամակների շարադրանքները ոճական առումով ինքնատիպ են. գործածված են ինչպես գրաբարին հատուկ ոճավորման միջոցներ (գոյականի սեռական հոլովով ավելադրություն՝ *անօրէնութեան օրինազանցութեան* (19), բայական ավելադրություններ՝ *չիք եղեալ կորեան* (40), *խորշելով խոյս ետու* (7) և այլն), այնպես էլ ժամանակի խոսակցական լեզվին հատուկ դիպուկ դարձվածային արտահայտություններ՝ *ի սենեակ սրտի իւրոյ* (46. «իր սրտի գաղտնարաններում»), *վառեալ ի սէր* (159* . «սիրուց տոջորվել») և այլն), որոնցով ընդգծվում են այդ գործերի լեզվաոճական բազմազանությունն ու գեղարվեստականությունը:

Երկի լեզվին ոճական ինքնատիպություն են հաղորդում թվարկումները՝ «Եղև հրաման ելանել և գրել զամենայն *սահմանս երկրի, գիւղօրէից և ազարակաց, զհող, զջուր, զայգի, զանդաստան, զձառ, զպունկ, և զամենայն ինչ որ պիտոյ է մարդկան»* (16):

Մեր դիտարկած երկերը, ճիշտ է, գեղարվեստական ստեղծագործություններ չեն և ժանրային առումով չեն կարող համեմատվել գեղարվեստական այլ երկերի հետ, սակայն հեղինակը կարողացել է ոճական հնարների շնորհիվ կենդանի շունչ հաղորդել իր գրվածքներին:

ԵՆՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եսայի Հասան-Ջալայանցի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» պատմական երկի և նամակների լեզվական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 18-րդ դարում իշխող է դեռևս նորմավորման փուլում գտնվող միասնական նոր գրական հայերենը, որը բնորոշվում է հնչյունական, բառապաշարային, քերականական բազմազան իրողություններով և արևմտյան ու արևելյան բարբառային ներթափանցումներով: Միաժամանակ, հայերենի նախորդ փուլերի որոշ միտումներ համակարգային բնույթ են ստանում: Դրանք գերազանցապես դրսևորվում են նոր լեզվով գրված նամակներում, մինչդեռ «Պատմութիւն»-ն ունի գրաբարյան հենք: Նույն հեղինակը, կախված ստեղծագործության ժանրից, կարող է գրել թե՛ գրաբարով և թե՛ իր ժամանակի նոր գրական լեզվով: Գրաբարյան, աշխարհաբարյան և բարբառային

տարրերի զուգահեռ գործածությունը վաղ աշխարհաբարի թերևս ամենակարևոր առանձնահատկությունն է, որը լիովին դրսևորված է Ե. Հասան-Ջալալյանցի գործերի լեզվում:

2. Ստեղծված լինելով 18-րդ դարի սկզբին՝ Ե. Հասան-Ջալալյանցի երկի և նամակների լեզուն ժառանգել է հայերենի նախորդ փուլերում նկատվող հնչյունական որոշ իրողություններ՝ երկբարբառների և եռաբարբառների պարզեցում, պայթական և պայթաշփական խուլ բաղաձայնների ձայնեղացում, ձայնեղների խլացում և այլն: Անցումային այս խառը վիճակը արտացոլում է վաղ աշխարհաբարի բուն պատկերը, որ մեծապես նկատելի է առավելապես նամակներում:

3. «Պատմութիւն...» երկի լեզվական առաջընթաց գրաբարյան բառաշերտն է, կան խոսակցական լեզվի մասնակի ներթափանցումներ: Հանդիպում են բառերի իմաստային նոր վկայություններ և 14 փոխառյալ բառեր, որոնց մեծ մասը բառարաններում վկայված չէ:

4. Նամակների բառապաշարն ամբողջովին արտացոլում է վաղ աշխարհաբարի լեզվավիճակը: Այն բովանդակային և լեզվական առումներով ինքնատիպ է՝ հարուստ հայերենի ընդհանուր գրական և ժամանակի խոսակցական տարբերակներով: Նամակներում զգալի թիվ են կազմում փոխառությունները: Քննվել է ավելի քան 60 փոխառություն, որոնցից 14-ն արաբերենից է, 10-ը՝ թուրքական լեզուներից, 4-ը՝ պարսկերենից, 6-ը՝ ռուսերենից, մյուսները՝ եվրոպական լեզուներից:

Նամակների բառապաշարում զգալի է բարբառային բառաշերտը: Առանձնացվել է մոտ 44 բառ և բառաձև, դրանցից 18-ը բառարաններում վկայված չեն:

5. Հաշվի առնելով, որ Ե. Հասան-Ջալալյանցը ապրել և ստեղծագործել է Ղարաբաղի, Շամախիի, Ջուղայի բարբառային միջավայրերում՝ մենք փորձել ենք ուսումնասիրվող գործերից քաղված լեզվական փաստերը համադրել նշված բարբառների հետ: Հստակ ուրվագծվում է, որ հեղինակի երկերում որևէ բարբառ չի գերակշռում:

6. Հետազոտության արդյունքում ներկայացվել է 14 բառակազմական կաղապար և ենթակաղապար (երեքը՝ նամակներից), որոնցից 6-ը՝ բառաբարդման, 8-ը՝ ածանցման: Բառակազմական օրինաչափությունները համահունչ են հայերենի ընդհանուր օրենքներին և կանոններին: Դրանցում գերակշռում է բառաբարդման SjS (արմատ+հոդակապ+արմատ) հիմնակաղապարը:

7. «Պատմութիւն...» երկի և նամակների լեզուն պարունակում է ձևաբանական և շարահյուսական կարևոր առանձնահատկություններ, որոնք ժամանակի խոսակցական լեզվից անցած ներթափանցումներ են: Եթե «Պատմութիւն» երկում Հասան-Ջալալյանցը հետևողականորեն պահպանել է դասական գրաբարի հոլովման համակարգի օրինաչափությունները, ապա նամակ-

ներում գերազանցապես նախապատվությունը տվել է վաղաշխարհաբարյան կիրառություններին:

8. Ի տարբերություն «Պատմութիւն...» երկի լեզվի՝ նամակներում գոյականի թիվը դրսևորվում է հոգնակերտների բազմազանությամբ. այն ի հայտ է բերում նոր գրական հայերենին բնորոշ յուրահատկություններ:

9. Նամակների լեզվում հեղինակը գործածում է դերբայական նոր ձևեր՝ հարակատար, վաղակատար, ապառնիի նոր կազմությունը, ինչպես նաև աշխարհաբարյան *-ում* և *-իս* մասնիկներով անկատարը:

Խոնարհման համակարգում հանդիպում են բայական նոր եղանակներ ու ժամանակաձևեր:

Գրաբարի ստորադասական եղանակի ձևերի կողքին նամակներում առատորեն գործածված են ըղձական, պայմանական, հարկադրական եղանակային ձևեր, որոնք նոր հայերենին բնորոշ դրսևորումներ են: Հրամայական եղանակը գրաբարակերպ է, ունի սակավ կիրառություն:

10. «Պատմութիւն...» երկի և նամակների լեզվի շարահյուսական-շարադասական առանձնահատկություններից են *ուղղականով ենթակա դիմավոր բայով ստորոգյալ* կառույցի լայն գործածությունը, որոշի և հատկացուցչի նախադաս կիրառության կայունացման միտումը: Փոփոխություն է կրել կապի և կապվող բառի շարադասությունը. որոշ նախադրություններ խոսակցական լեզվի ազդեցությամբ դարձել են հետադրություններ:

11. Ե. Հասան-Ջալալյանցի գործերի լեզուն հետաքրքրություն է ներկայացնում նաև ոճական առումով՝ պատկերավորման միջոցների բազմազանությամբ, դարձվածային միավորների, բառերի ձևափոխության խմբերի հմուտ կիրառություններով, որոնցով խոսքն առավել սեղմ, ազդեցիկ ու տպավորիչ է դառնում:

Արենախոսության հիմնական դրոյթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. «Բաղաձայնների հնչյունական որոշ դրսևորումներ Եսայի Հասան-Ջալալյանցի նամակներում», «Հայագիտական հանդես», N 3(14), 2010, էջ 69-74:

2. «Գրաբարի երկբարբառների և եռաբարբառների դրսևորումները Եսայի Հասան-Ջալալյանցի Պատմության մեջ և նամակներում», «Բանբեր Երևանի համալսարանի», 133.2, 2011, էջ 14-21:

3. «Բայական համակարգի զուգաձևությունները Եսայի Հասան-Ջալալյանցի նամակներում», «Էջմիածին», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ԺԲ, 2011, էջ 31-41:

4.«Բայաձևերի գործածությունը Եսայի Հասան-Ջալալյանցի «Պատմու-

թին համառոտ Աղուանից երկրի» երկում», Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 108-117:

5. «Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը Եսայի Հասան-Ջալայանցի «Պատմութիւն» երկում», «Էջմիածին», Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 2, 2013, էջ 89-95:

6. «Նորակազմությունները Եսայի Հասան-Ջալայանցի «Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի» երկում», «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2014, էջ 250-256:

7. «Եսայի Հասան-Ջալայանցի նամակների լեզվական էական առանձնահատկությունները», Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2015, էջ 46-58:

СААКЯН РУЗАННА АКОПОВНА
ЯЗЫК ПРОИЗВЕДЕНИЯ “КРАТКАЯ ИСТОРИЯ СТРАНЫ АЛБАНСКОЙ” И
ПИСЕМ КАТОЛИКОСА ЕСАИ ГАСАН-ДЖАЛАЛЯНЦА

РЕЗЮМЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 – <<Армянский язык>>

Защита состоится 13.06.2016г. в 15⁰⁰ ч. на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им. Р.Ачаряна НАН РА (адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Целью настоящей диссертации является изучение языка “Краткая истории страны Албанской” Есаи Гасан-Джалалянца и его письмовника, которое может выявить характерные особенности языка автора и на их примере представить как соотносились старые и новые реалии армянского языка в 18 веке.

В диссертации языковые реалии описаны, оценены и проанализированы на фонетическом, лексическом, морфологическом, синтаксическом и стилистическом уровнях.

Диссертация состоит из введения, четырех глав с соответствующими подглавами, выводов и списка использованной литературы.

Во **Введении** отдельно представлены некоторые подробности жизни и деятельности Католикоса Албании Тер-Есаи Гасан-Джалалянца, сочинение “Краткая история страны Албанской” и историографические отклики. Вкратце представлена также языковая характеристика описываемого времени.

В первой главе – “Фонетическая характеристика языка “Истории..” и писем” – рассмотрены фонетические реалии, отраженные в языке указанных сочинений. Факты фонетической системы представлены совместно с целью показать общность и различия в языке изучаемых произведений.

Глава вторая – “Лексика” – состоит из отдельных подглав.

В первой подглаве рассмотрено новое смысловое применение слов, заимствованные слова, часто используемые в устно-разговорном языке и диалектах, выявлены словообразовательные модели новообразований.

Во второй подглаве изучены наиболее широко используемые и характерные для данного периода времени элементы языка. Язык писем характеризуется не только литературными, но и диалектными и заимствованными словами, отражающими общественно-политическую жизнь, а также стилистическими оборотами, свойственными мышлению описываемого времени.

Глава третья – “Грамматические особенности” – также разделена на подглавы.

В первой подглаве исследуются те морфологические реалии “Истории..” и писем, которые отклоняются от закономерностей габара и в основном характерны для языковой ситуации раннего ашхарабара.

Во второй подглаве рассмотрены синтаксические реалии “Истории...” и писем.

В изученных работах сочетания определение-определяемое, а также формы несогласованного определения имеют характерную для нового времени синтаксическую особенность. В таких словосочетаниях значительная часть случаев несогласованности является результатом влияния устной речи. Подвергся изменению синтаксис союза и связанных слов: некоторые предлоги под влиянием устной речи перешли в разряд послелогов.

В четвертой главе – “Стилистические особенности” – рассмотрены языковые и стилистические особенности “Истории...” и писем Е.Гасан-Джалалянца.

Изучаемые работы отличаются элементами народного разговорного языка, богатой лексикой, целевым использованием стилистических форм и приемов, а также синонимов и антонимов, умелым применением эпитетов, метафор и сравнений, которые характеризуют индивидуальность речи и стиля автора.

В заключении приведены основные выводы исследования.

RUZANNA HAKOB SAHAKYAN
THE LANGUAGE OF THE WORK “A BRIEF HISTORY OF THE AGHUANK
COUNTRY” AND LETTERS BY CATHOLICOS OF AGHUANK ESAYI HASAN-
JALALYAN

Thesis for the degree of candidate of philological sciences, specialty
10.02.01- Armenian Language.

The defense of the thesis will be held on 13.06.2016, at 15⁰⁰, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015, st. G. Lusavorich, 15).

SUMMARY

The purpose of the dissertation is to study the language of the work “A Brief History of the Aghuank country” and letters by Esayi Hasan-Jalalyan that can reveal the characteristic features of the author's language, and present through them, what the ratio between the linguistic realities of old (գրաբար) and modern Armenian (աշխարհաբար) language in the 18th century.

The linguistic realities have been described, evaluated and analyzed at the phonetic, lexical, morphological, syntactical and stylistic levels in the dissertation.

The dissertation consists of the Introduction, four chapters, which have their own subchapters, the Conclusions and list of references.

In the Introduction, some details about the life and activity of the catholicos of Aghvank Esayi Hasan-Jalalyan, the work “A Brief History of the Aghuank country” and references in history have been presented separately. A brief description of the linguistic characteristics of the era is also presented.

In the first chapter, “The phonetic characteristics of the language of the “History...” and the letters”, the phonetic realities of the “History...” and letters have been studied. The facts of the phonetic system have been presented together to show the commonalities and differences existing in the language of the works under study.

The second chapter, “Vocabulary”, is divided into separate subchapters.

In the first subchapter, the new semantic uses of words and the loanwords commonly used in the oral-colloquial language and dialects have been investigated and the word formation patterns of neologisms have been identified.

In the second subchapter the more widely used linguistic elements characteristic of that era have been studied. The language of the letters is characterized not only by literary words, but also the dialectal and loan words

reflecting the social and political life and the stylistic expressions typical of the way of thinking of the time.

The third chapter, “Grammatical characteristics”, has been divided into subchapters.

In the first subchapter, those morphological realities of the “History...” and letters that deviate from the old Armenian patterns and are mainly characteristic of the linguistic status of the early modern Armenian have been studied. The second subchapter has elaborated on the investigation of the syntactical realities of the “History...” and letters.

The determinative and attributive constructions in the works under study already have syntactical features typical of the new times and a significant part of the disagreements in those constructions is a result of the spoken language impact. The word order of the conjunctions and the linked words has changed; some sentences have become postpositions under the influence of the spoken language.

In the fourth chapter, “Stylistic Characteristics”, the linguostylistic features of the “History...” and letters of Esayi Hasan-Jalalyan have been presented.

The studied works are distinguished with a vocabulary rich in the elements of the common spoken language, purposeful applications of stylistic structures and techniques, synonyms and antonyms, professional uses of epithets, metaphors and comparisons, which characterize the individuality of the author's speech and style.

In the conclusions, the main findings and some inferences drawn from the research are summarized.